ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ԱՌՆՎԱԶՆ ՄԵԿ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԶԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ, 12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ, 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ 17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 12-րդ հոդվածի 6-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 17-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. 2026 թվականի հուլիսի 30-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի (այսուհետ նաև՝ Դիմող) դիմումը, որով դիմողը խնդրել է.

«(...) որոշել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 12-րդ հոդվածի 6-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 17-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետի Սահմանադրության 60-րդ, 66-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

2. Դիմողը պնդում է, որ նշված իրավակարգավորումների համակցված կիրառման արդյունքում անձի նկատմամբ ընդամենը քրեական հետապնդման իրականացումը, առանց օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի կամ քրեական հետապնդման ոչ ռեաբիլիտացնող հիմքով դադարեցման, հանգեցնում է գործող թույլտվությունների ուժը կորցրած ճանաչման, զենքի առգրավման և սեփականության իրավունքի

դադարեցման, մինչդեռ նույն օրենքի այլ կարգավորումներով այդ հետևանքը պայմանավորվում է միայն մեղավորության վերջնական դատական հաստատմամբ: Հետևաբար՝ վիճարկվող դրույթները, ըստ Դիմողի, խախտում են սեփականության իրավունքի և անմեղության կանխավարկածի սահմանադրական այլ երաշխիքները, ինչպես նաև համաչափության և իրավական որոշակիության սկզբունքները:

Դիմողը Սահմանադրական դատարանի առջև բարձրացնում է հետևյալ հարցադրումները.

«1. Արդյո՞ք «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 6-րդ մասը և 17-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետը՝ 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի և 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հետ համակարգային փոխկապակցվածությամբ, համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածին, այնքանով, որքանով անձի նկատմամբ ընդամենը քրեական հետապնդման իրականացումը, մինչև օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը, հանգեցնում է օրինական հիմքով ձեռք բերված զենքի նկատմամբ սեփականության իրավունքի փաստացի սահմանափակման և հետագա դադարեցման՝ փաստացի վերածվելով սեփականությունից զրկման:

2. Արդյո՞ք նույն իրավակարգավորումները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով ամրագրված համաչափության սկզբունքին, այնքանով, որքանով քրեական հետապնդման փուլում նախատեսում են սեփականության իրավունքի նկատմամբ առավել խիստ միջամտություն՝ առանց նույն սահմանադրական նպատակին ավելի մեղմ միջոցներով հասնելու հնարավորության գնահատման:

3. Արդյո՞ք Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 10-րդ կետերի, 6-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 17-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետի համակցված կիրառումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված իրավական որոշակիության սկզբունքին, այնքանով, որքանով սեփականության իրավունքի դադարեցման նման հետևանքը չի բխում օրենքի հստակ և անմիջական կարգավորումից, այլ ձևավորվում է միայն նշված նորմերի մեկնաբանության արդյունքում:

4. Արդյո՞ք Սահմանադրությանը համապատասխանում է այնպիսի իրավակարգավորումը, որի պայմաններում «թույլտվություն ստանալու իրավունքը բացառող հանգամանքները» միաժամանակ և առանց հստակ օրենսդրական տարբերակման դառնում են

արդեն իսկ օրինական հիմքով ձեռք բերված և իրականացվող սեփականության իրավունքի դադարեցման հիմք»:

Դիմողը նշում է, որ «(...) առանց որևէ տարբերակման, թե ինչ մեղադրանքով է հարուցված քրեական հետապնդումը, (դիտավորյալ թե անզգույշ հանցանքի, ինչ ծանրության հանցանքի, ինչ բնույթի հանցանքի) ինքնին իրավաչափ չէ սահմանել, որ այդ հանգամանքը միայն անհրաժեշտ ու բավարար պայման է սեփականության իրավունքի սահմանափակման համար»:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող կարգավորումները հակասում են Սահմանադրությանը, քանի որ թույլ են տալիս մինչև անձի մեղավորության դատական հաստատումը փաստացի և իրավաբանորեն զրկել նրան սեփականությունից, նախատեսում են անհամաչափ միջամտություն և չեն ապահովում սեփականության իրավունքի սահմանափակման հստակ, որոշակի և կանխատեսելի իրավակարգավորում:

Դիմողը պնդում է. «(...) օրենսդիրը հանրային շահի պաշտպանության նպատակով ընտրել է այնպիսի կարգավորման մոդել, որը հիմնված է ընդհանուր և ավտոմատ իրավական հետևանքների վրա՝ բացառելով անհատական գնահատումը և սահմանափակման ինտենսիվության տարբերակումը»:

Դիմողը նշում է, որ «(...) օրենքում բացակայում է այն դրույթը, որը միանշանակ կսահմանի, թե որ իրավաբանական փաստն է անմիջականորեն առաջացնում սեփականության իրավունքի դադարեցումը: Այդ հետևանքը հնարավոր է բացահայտել միայն տարբեր հոդվածների փոխկապակցված մեկնաբանությամբ, մինչդեռ հիմնական իրավունքի սահմանափակման հիմքը պետք է բխի անմիջապես օրենքի հստակ կարգավորումից»: Ավելին, Դիմողի գնահատմամբ. «Իրավական որոշակիության տեսանկյունից խնդրահարույց է նաև այն, որ վիճարկվող կարգավորումները չեն ապահովում նորմերի միջև անհրաժեշտ համակարգային ներդաշնակություն: Օրենքի առանձին դրույթները նույն իրավիճակի վերաբերյալ ձևավորում են տարբեր իրավական հետևանքների նախադրյալներ, սակայն չեն սահմանում, թե դրանց փոխհարաբերությունն ինչպիսին է և ինչ հերթականությամբ պետք է կիրառվեն: Այդ պայմաններում իրավական արդյունքը կանխորոշվում է ոչ այնքան օրենքի տեքստով, որքան դրա մեկնաբանությամբ:

Նման կառուցակարգը լայն հայեցողություն է թողնում իրավակիրառող մարմնին: Երբ հիմնական իրավունքի սահմանափակման ծավալը և հիմքերը բավարար չափով չեն

բխում օրենքից, իրավակիրառողը փաստացի ստիպված է լրացնել օրենսդրական անորոշությունը սեփական մեկնաբանությամբ»:

Վերոգրյալի լույսի ներքո՝ Դիմողը եզրահանգում է, որ վիճարկվող դրույթները հակասում են Սահմանադրության 60, 66, 78 և 79-րդ հոդվածներին:

3. Ուսումնասիրելով դիմումը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ գործի քննությունն ամբողջությամբ մերժելու հիմք, որպիսի պայմաններում սույն գործի քննությունը **ենթակա է մերժման՝ հետևյալ հիմքով և պատճառաբանությամբ.**

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ուժով Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, ***եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանն իր մի շարք աշխատակարգային որոշումներում (08.02.2019թ. ՍԴԱՈ-12, 26.11.2019թ. ՍԴԱՈ-141, 30.11.2020թ. ՍԴԱՈ-222, 15.02.2021թ. ՍԴԱՈ-32, 03.12.2021թ. ՍԴԱՈ-248 և այլն) բացահայտել է այն հարցերի շրջանակը, որոնք Սահմանադիրը չի դիտարկել որպես Բարձր դատարանի քննությանը ենթակա հարցեր:

Սահմանադրական դատարանը վերահաստատում է, որ *սահմանադրական արդարադատություն հայցող համապատասխան սուբյեկտներին Սահմանադիրն իրավասություն է վերապահել դիմելու Սահմանադրական դատարան բացառապես* ***սահմանադրաիրավական բովանդակություն ունեցող վեճերով****, այն է՝ Սահմանադրության 168-րդ հոդվածով նախանշված այն հարցերով, որոնց առարկան անմիջականորեն կապված է Սահմանադրության նորմերի մեկնաբանման և կիրառման, պետական իշխանության օրինական հաջորդականության երաշխավորման, իրավական անվտանգության, սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման հետ և այլն:*

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սահմանադրական արդարադատություն հայցող սուբյեկտների դիմումների հիման վրա սահմանադրական վերահսկո-

ղության իրականացումը ենթադրում է դիմումով նաև այնպիսի հիմնավորված սահմանադրաիրավական հարցի առաջադրում, որի շրջանակներում **հնարավոր է բացահայտել վիճարկվող դրույթի և սահմանադրական արժեքների միջև առկա ենթադրյալ հակասության բնույթը և բովանդակությունը:**

Այդ առումով, Սահմանադրական դատարանի գնահատմամբ սույն դիմումով առաջադրված չէ այդպիսի կոնկրետ և բավարար չափով փաստարկված սահմանադրաիրավական խնդիր: Դիմողը, մասնավորապես, մի կողմից՝ պնդում է, որ վիճարկվող իրավակարգավորումների համակցված կիրառման արդյունքում անձի նկատմամբ միայն քրեական հետապնդման իրականացումը հանգեցնում է արդեն իսկ ձեռք բերված զենքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարեցման, իսկ մյուս կողմից՝ նշում, որ օրենքի համապատասխան դրույթներից այդպիսի հետևանքն անմիջականորեն չի բխում, և այն հնարավոր է բացահայտել միայն տարբեր նորմերի փոխկապակցված մեկնաբանության միջոցով:

Այդ պնդումները, սակայն, Սահմանադրական դատարանի դիտարկմամբ փոխադարձաբար ամբողջությամբ համադրելի չեն: Եթե, ըստ Դիմողի, սեփականության իրավունքի դադարեցումը վիճարկվող իրավակարգավորումներից չի բխում անմիջականորեն և կարող է հանգեցնել այդպիսի հետևանքի միայն դրանց մեկնաբանության արդյունքում, ապա, թեև սույն դիմումը ներկայացված է վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում, Դիմողը պետք է, նախևառաջ, հիմնավորեր, թե իրավակիրառ կոնկրետ ինչ մեկնաբանություն է հանգեցնում նշված արդյունքին, ինչու է այդ մեկնաբանությունը բխում վիճարկվող նորմերի բովանդակությունից և, հատկապես, ինչու է հենց այդ մեկնաբանությունը հանդիսանում վիճարկվող իրավակարգավորման իրավական անհրաժեշտ հետևանքը: Մինչդեռ Սահմանադրական դատարանը փաստում է, որ դիմումն այդպիսի հետևողական իրավական վերլուծություն չի բովանդակում:

Դիմողը, ըստ էության, ելակետ է ընդունում վիճարկվող նորմերի՝ իր կողմից առաջարկվող մեկնաբանությունը և դրանից բխեցնում դրանց ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ կասկածը՝ առանց բավարար չափով բացահայտելու այն նորմատիվ կապը, որի միջոցով քրեական հետապնդման փաստը վերածվում է սեփականության իրավունքից զրկման անմիջական իրավական հիմքի:

Ավելին, Սահմանադրական դատարանը փաստում է, որ դիմումում առկա է ներքին հակասություն նաև վիճարկվող իրավակարգավորումների իրավական հետևանքի բնույթի վերաբերյալ: Մի դեպքում՝ Դիմողը պնդում է, որ վիճարկվող նորմերի համակցված կիրառումն ինքնաբերաբար առաջ է բերում գործող թույլտվությունների ուժը կորցրած ճանաչում, զենքի առգրավում և սեփականության իրավունքի դադարեցում, իսկ մեկ այլ դեպքում՝ նշում է, որ օրենքում բացակայում է այն դրույթը, որը միանշանակ սահմանում է, թե որ իրավաբանական փաստն է անմիջականորեն առաջացնում սեփականության իրավունքի դադարեցումը: Այս երկու մոտեցումների միջև առկա հակասությունն էական նշանակություն ունի դիմումի առարկայի որոշակիացման առումով, քանզի առաջին դեպքում ենթադրվում է օրենսդրական հստակ իրավական հետևանքի առկայություն, իսկ երկրորդ դեպքում՝ դրա բացակայություն և միայն իրավակիրառ մեկնաբանության միջոցով նշված հետևանքի առաջացում:

Փաստորեն, Դիմողը, ըստ էության, միաժամանակ վիճարկում է և՛ օրենսդրական կարգավորումը, և՛ այդ կարգավորման բացակայությունը, և՛ դրա հնարավոր մեկնաբանությունը՝ առանց դրանցից որևէ մեկի առնչությամբ ամբողջական և ներքին առումով՝ հետևողական սահմանադրաիրավական առումով հիմնավորման:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի կողմից ներկայացվող դիմումների առնչությամբ **դիմումի փաստարկված լինելու պահանջն իր նշանակությունը չի կորցնում**, հետևաբար՝ դիմողը չի կարող սահմանափակվել այնպիսի ընդհանրական դատողություններով, ինչպիսիք են իրավակարգավորումը «կարող է» հանգեցնել սեփականության իրավունքի սահմանափակման, «կարող է» առաջացնել իրավական անորոշություն կամ «կարող է» թողնել լայն հայեցողություն իրավակիրառ մարմնին: Վերջիններս ներառվում են սահմանադրական վերահսկողության առարկայի շրջանակում, երբ դիմողը բացահայտում է դրանց *նորմատիվ հիմքը, պատճառահետևանքային կապը վիճարկվող իրավակարգավորման հետ և այն սահմանադրական չափանիշը, որին այդ իրավակարգավորումը ենթադրաբար չի համապատասխանում*:

Վերոգրյալը վկայում է, որ Դիմողը վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականության վերաբերյալ կոնկրետ և բավարար չափով փաստարկված խնդիր/հարց, դիմումով, ըստ էության, չի ձևակերպել, այլ ներկայացրել է այդ կարգավորումների

հնարավոր իրավական հետևանքների, դրանց մեկնաբանության և կիրառության վերաբերյալ ընդհանուր իրավական մտահոգություններ:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի կողմից ներկայացված դիմումի՝ անհատական գործով պայմանավորված չլինելու հանգամանքը չի նշանակում, որ Դիմողը կարող է սահմանափակվել սոսկ **ընդհանուր քաղաքական, իրավական կամ տեսական մտահոգություններ ներկայացնելով.** Սահմանադրական դատարանի առջև դիմումով բարձրացված հարցադրումը պետք է լինի հստակ, ներքին առումով՝ հետևողական, իրավաբանորեն պատճառաբանված և ուղղակիորեն կապակցված վիճարկվող նորմի բովանդակության հետ:

Սահմանադրական արդարադատություն հայցող սուբյեկտների կողմից ներկայացվող դիմումը պետք է բավարարի Սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածով ամրագրված պահանջները՝ բովանդակելով, ի թիվս այլնի, նաև սահմանադրաիրավական վեճի էության հստակ նկարագրությունը և այդ վեճի առկայությունը հավաստող փաստարկներ, *որպիսիք չեն կարող դիտարկվել լոկ Դիմողի՝ վիճարկվող նորմերի՝ իրավակիրառ պրակտիկայում ենթադրյալ/հնարավոր հակասահմանադրական մեկնաբանման և կիրառման ենթադրություններն ու մտահոգությունները. վերջիններս կարող են բարձրաձայնվել խորհրդարանական գործունեության շրջանակներում:*

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրական դատարանի 03.12.2021 թ. ՍԴԱՈ-248 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարան դիմող առանձին սուբյեկտներին առավել բարձր մակարդակի փութաջանություն ցուցաբերելու հորդորը սոսկ վերացական բնույթ չի կրում:

Սահմանադրական արդարադատություն հայցելիս օրենսդրական բարձր գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից վերացական սահմանադրական վերահսկողության շրջանակներում ենթադրյալ հակասահմանադրական իրավակարգավորումների հարցը Բարձր դատարանի առջև բարձրացնելու նպատակային գործիքակազմը մշտապես պետք է ծառայի հանրային կյանքի բոլոր ոլորտներում Սահմանադրության գերակայության հաստատմանն ու ամրապնդմանը՝ զերծ մնալով հանրային իշխանության մարմինների գործունեությունը սոսկ քննադատելու միտումներից՝ սահմանադրական արդարադատություն հայցելիս:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումում առաջադրված հարցերը, ըստ էության, ենթադրում են ոչ թե վիճարկվող նորմերի սահմանադրականության վերաբերյալ վեճի լուծում, այլ դրանց հնարավոր մեկնաբանության, կիրառման և ենթադրյալ հետևանքների գնահատում: Նման պայմաններում Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ դիմումը չի հաղթահարում փաստարկվածության նվազագույն շեմը, ***որպիսի պայմաններում սույն գործի քննությունը ենթակա է մերժման Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով:***

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա՝ «Ձենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 12-րդ հոդվածի 6-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 17-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

10 սեպտեմբերի 2026 թվականի
ՍԴԱՈ-203